ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 2-Ա
20 փետրվարի 2014թ.

ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3)-րդ կետով, համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի դրույթների և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության *10* կողմ, *0* դեմ, *0* ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Կապան քաղաքային համայնքի 2013 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝

1) եկամուտների գծով՝ 1028596.6 հազար դրամ

2) ծախսերի գծով՝ 1022618.4 հազար դրամ :

2. Հաստատել բյուջեի տարեկան հաշվետվությունները համաձայն հետևյալ հավելվածների.

1) Համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ առանձին եկամտատեսակների՝ հավելված N 1,

2) Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ գործառնական դասակարգման՝ հավելված N 2,

3) Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ հավելված N 3,

4) Համայնքի բյուջեի հավելուրդի կամ դեֆիցիտի՝ /պակասուրդի/ կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ հավելված N 4,

5) Համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրների կամ հավելուրդի օգտագործման ուղղությունների կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ հավելված N 5:

Կողմ (10)՝

ՎԻԼԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ	ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ԱՐԱ ԹՈՒՄԱՆՅԱՆ	ԺԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ԱՐՍԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	ԿԱՐԵՆ ՇԱՀԻՆՅԱՆ
ՄՈՒՐԱԴ ՄԵԼԻՔՅԱՆ	ՎԱՀԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՄՀԵՐ ՄԻՐՋՈՅԱՆ	ԱՐԹՈՒՐ ՍԱՀԱԿՅԱՆ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2014 թ փետրվարի 20

ք. Կապան